ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. Դեկտեմբերի 6ից 10-ը ներառյալ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի՝ Ինդոնեզիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**
   Ավագ Ավանեսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Ինդոնեզիայի Հանրապետություն (ք. Ջակարտա), 2022թ. դեկտեմբերի 6-ից 10-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**
   Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD)

5. **Գործուղման նպատակը՝**
   Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության պետական կազմակերպությունների կորպորատիվ կառավարման ասիական-խաղաղօվկիանոսյան ցանցի 15-րդ հանդիպմանը մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները՝**
   - պետական կազմակերպությունների կորպորատիվ կառավարման ուղեցույցով սահմանված չափանիշներին բավարարող կառավարման ստանդարտների ներդրման ուղղությամբ անհրաժեշտ քայլերը
   - կլիմայի փոփոխությունը և դրանով պայմանավորված պետական կազմակերպությունների քաղաքականության փոփոխությունները
   - կոռուպցիայի կանխարգելում և բիզնես միջավայրի բարելավում
   - մասնակից երկրների պետական կազմակերպությունների կորպորատիվ կառավարման փորձը և զարգացման միտումները:
7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից հրապարակված պետական կազմակերպությունների կորպորատիվ կառավարման ուղեցույցով սահմանված չափանիշներին բավարարող պետական կազմակերպությունների կորպորատիվ կառավարման ստանդարտների ներդրման ուղղությամբ անհրաժեշտ քայլերը, ինչպես նաև մասնակից երկրներում պետական կազմակերպությունների կորպորատիվ կառավարման փորձը և զարգացման միտումները:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Հանդիպման մասնակից երկրների ներկայացուցիչների միջև տեղի են ունեցել տարաբնույթ քննարկումներ՝ պետական կազմակերպությունների կորպորատիվ կառավարման ոլորտներում բարեփոխումների իրականացման փորձի փոխանակման ուղղություններով:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը՝**

Recoverable Signature

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

15.12.2022թ.